Դրամաշնորհային աջակցություն «Մարդկային անվտանգության ծրագրերի» համար ՖՏ 2023. «Մարգահովիտ և Ֆիոլետովո համայնքների համար աղբատար մեքենա և աղբամաններ ձեռք բերելու» ծրագրի ստորագրման արարողություն

2023թ. հունիսի 27-ին ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունում տեղի ունեցավ «Մարգահովիտ և Ֆիոլետովո համայնքների համար աղբատար մեքենա և աղբամաններ ձեռք բերելու» մինչև 127,071 ԱՄՆ դոլար ֆինանսավորմամբ Մարդկային անվտանգության «Grassroots» ծրագրերի համար դրամաշնորհային աջակցության ստորագրման արարողությունը:

Դրամաշնորհի պայմանագիրը ստորագրվեց Հայաստանում Ճապոնիայի դեսպան պարոն Մասանորի Ֆուկուշիմայի և Մարգահովիտի երիտասարդական կենտրոնի նախագահ տիկին Էմիլիա Մարտիրոսյանի կողմից: Արարողությանը ներկա էին նաև Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ պարոն Վաչե Տերտերյանը, Մարգահովիտ համայնքի ղեկավար պարոն Վահրամ Դանիելյանը, Ֆիոլետովո համայնքի ղեկավար պարոն Ալեքսեյ Չիչյովը:

Ծրագրի նպատակն է բարելավել թափոնների կառավարման համակարգը Մարգահովիտ և Ֆիոլետովո համայնքներում աղբահանության համար մեքենաների և աղբամանների տրամադրման միջոցով: Արդյունքում, ծրագրից կօգտվի համայնքների մոտ 4800 բնակիչ:

Դեսպան Ֆուկուշիմայի ելույթը

Պայմանագրի ստորագրումը դեսպան Ֆուկուշիմայի և տկն. Մարտիրոսյանի կողմից

Ձեռքսեղմում ստորագրումից հետո՝ պրն. Տերտերյանի ներկայությամբ

(երկրորդից ձախ)
Պրն. Դանիելյանը, պրն. Չիչյովը, դեսպան Ֆուկուշիման և տկն. Մարտիրոսյանը